

**ՍԱՄՈՒԷԼ ԱՆԵՑՈՒ
ՀԱԽԱՔՄՈՒՆՔ Ի ԳՐՈՑ ՊԱՏՄԱԳՐԱՑ...
ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ**

ԿԱՐԷՆ ՄԱԹԵՒՈՍԵԱՆ

Սամուէլ Անեցու Հաւաքմունք Ի Գրոց Պատմագրաց Յաղագս Գիւտի ժամանակաց Անցելոց Մինչեւ Ի Ներկայ Մայրաքաղ Արարեալ երկը, կարճ՝ ժամանակագրութիւնը¹ հայ մատենագրութեան ժԲ. դարի նշանաւոր երկերից է: Այն սկսուած է Ադամից եւ հասնում մինչեւ 1163: Հակառակ ժամանակագրական այսչափ մեծ ընդգրկմանը, շարադրուած է սեղմ՝ հեղինակի բնորոշմամբ «կարճ ի կարճոյ» սկզբունքով, եւ պատահական չէ, որ միջնադարում բազմաթիւ ընդօրինակութիւններ է ունեցել (յայտնի է ժամանակագրութիւնի ամբողջական կամ մասնակի ընդօրինակութիւն պարունակող 70 ձեռագիր):

1818ին լատիներէն, 1876ին Ֆրանսերէն եւ 1893ին հայերէն միակ հրատարակութեամբ գիտական աշխարհին յայտնի այս երկի հիմնական աւանձնայատկութիւններից է այն, որ գրուած լինելով ժամանակագրական աղիւսակների եղանակով, յետագայում ենթարկուել է բազմաթիւ յաւելումների ու լրացումների, շարունակուել է տարբեր հեղինակների կողմից: Դարերի ընթացքում ամէն նոր ընդօրինակութեան հետ ընդմիջարկութիւնների եւ լրացումների թիւն այնքան է մեծացել, որ ծաւալով գրեթէ հաւասարուել է հեղինակի բուն ժամանակագրութիւնին: Քանի որ նախկինում ժամանակագրութիւնի ձեռագրերը յատուկ ուսումնասիրութեան չեն ենթարկուել, հեղինակի բուն շարադրանքի եւ յետագայ յաւելումների սահմանները մնացել են անորոշ, ինչն առկայ է նաեւ հիմնականում ուշ շրջանի ձեռագրերի հիման վրայ արուած՝ վերը նշուած բոլոր հրատարակութիւններում:

Սամուէլ Անեցու ժամանակագրութիւնի ձեռագրական ժառանգութեան վերջին տարիներին արուած ուսումնասիրութեան շնորհիւ ճշտուել են պատմիչի կենսագրութեան մի շարք հարցեր, յստակ պատկերացում է առաջացել բուն ժամանակագրութիւնի վերաբերեալ, քանի որ պարզուել են դրա հնագոյն ձեռագրերը եւ հնարաւոր է դարձել հեղինակային շարադրանքը յստակօրէն տարանջատել յետագայ բազմաթիւ ընդմիջարկութիւններից ու յաւելումներից²: Ստորեւ կը ներկայացնենք այդ ուսումնասիրութիւնների հիմնական արդիւնքները՝ համառօտաբար:

ՀԵՂԻՆԱԿԸ

Սամուէլ Անեցին Անիի Կաթողիկէ Եկեղեցու (Մայր տաճարի) քահանայ էր³ եւ իր ժամանակագրութիւնը կազմել է Գրիգոր Գ. Պահլաւունի Կաթողիկոսի (1113-1166) պատուէրով: Նրա ապրած ժամանակաշրջանում Անին քաղաքական բուռն անցքերի կիզակէտում էր, իսկ Կաթողիկէն, որպէս

նախկին կաթողիկոսարանի եկեղեցի, Անիի հոգեւոր կեանքի կենտրոնն ու խորհրդանիշն էր: 1124ից յետոյ յաջորդաբար այս եկեղեցում են սպասաւորել նշանաւոր վարդապետ եւ Սամուէլ Անեցու ուսուցիչ Յովհաննէս Սարկաւազը, Սամուէլ Անեցին, եւ նոյն դարի վերջերին մէկ այլ քահանայ պատմիչ՝ Միխիթար Անեցին:

ԺԲ. դարը Անիի պատմութեան մէջ յատկանշուած է որպէս տեւական պայքարի շրջան, որ մղում էին մի կողմից Շաղաղեան ամիրաները՝ քաղաքում իրենց իշխանութիւնը պահպանելու, միւս կողմից՝ զօրացած Վրաց Թագաւորութեան գահակալները՝ Անին ու նրա շրջակայքը գրաւելու համար: Քաղաքի հոգեւորականութիւնն այդ շրջանում զգալի ազդեցութիւն ունեցող խաւ էր. մինչեւ 1105 Անիում էր գահակալում Բարսեղ Ա. Անեցի կաթողիկոսը (1081-1113), որը լիարժէք գործունէութեան արտօնութիւն էր ստացել սելջուկեան սուլթան Մելիքշահից (1072-1092): Հենց Բարսեղ Կաթողիկոսի նախաձեռնութեամբ Անիում վերաբացուեց կաթողիկոսարանի վարդապետարանը, որի ուսուցչապետութիւնը յանձնուեց Յովհաննէս Սարկաւազին⁴: Սամուէլ Անեցու *ժամանակագրութիւնի* յետագայ լրացնողներէն մէկը թուարկել է Յովհաննէս Սարկաւազի անեցի սաներից մի քանիսին, որոնց շարքում է մեր ժամանակագիրը. «սէր Խաչատուր եւ Գրիգոր, եւ Յովհաննէս եւ Սամուէլ, ամենքեան սրբա Անեցիք»⁵:

Յայտնի է, որ Յովհաննէս Սարկաւազն Անիում զբաղուել է ո՛չ միայն մանկավարժութեամբ, այլեւ տոմարի բարեկարգման հարցերով, նաեւ տոմարագիրտութիւն է ուսուցանել իր սաներին: Այդ գիտելիքները կիրառողներից էր նաեւ Սամուէլ Անեցին, որը *ժամանակագրութիւնից* բացի գրել է նաեւ տոմարական մի աշխատութիւն. *Մեկնութիւն Տումարի, Ջոր Արարեալ է Սամուէլի Քահանայի, Ի Խնդրոյ Ստեփանոսի Իմաստասիրի*⁶:

1105ին Անիից հեռացած Բարսեղ Անեցուն յաջորդած՝ Գրիգոր Գ. Պահլաւունի կաթողիկոսը 1120ականներին փորձեց կաթողիկոսական աթոռը վերահաստատել Անիում⁷: Այս մասին հաղորդող միակ հայ պատմիչը Սամուէլ Անեցին է, ըստ որի կաթողիկոսն Անի գալու վերաբերեալ պայմանաւորուածութիւն ունէր քաղաքի Շաղաղեան ամիրա Աբուլսուարի հետ. «Բայց սրբազան հայրապետն եւ առաջնորդն հաւատոյ Տէր Գրիգորիս, վասն զի ուխտ սիրոյ ունէր առ Ապլսուար՝ վասն իւր սեփնական աթոռոյս, զալ այսրէն նորա յաւժար կամակցութեամբ»⁸: Սակայն քաղաքական իրադարձութիւնները, մասնաւորապէս վրացիների կողմից 1124-1126ին քաղաքի գրաւումը, խափանեցին այս ծրագիրը:

Գրիգոր Գ. Պահլաւունին երկրորդ անգամ փորձել է Անի տեղափոխուել 1149-50ին, ինչպէս հաղորդում է Սմբատ Սպարապետը, բայց հանգամանքների բերումով տէր դառնալով Հռոմկլայ անառիկ ամրոցին, այնտեղ է հաստատել կաթողիկոսարանը¹⁰: Չնայած սրան, կաթողիկոսը շարունակել է սերտ կապեր պահպանել Անիի հետ, եւ պատահական չէ, որ ժամանակագրութիւն է պատուիրել հենց Կաթողիկէի երէց Սամուէլ Անեցուն:

ժամանակագրութիւնի սկզբում, իր օգտագործած աղբիւրները թուարկելուց յետոյ, հեղինակը դիմելով պատուիրատուին, գրում է. «Իսկ

իմ մոռացեալ գագիտութիւն եւ զանուսումնութիւն իմ, ի թախանձելոյ քոյ, սրբազգեացոյ Գրիգոր, յաղթեցայ ի սիրոյ կամաց ձերոց, առ ի գրել, գոր կամեցար. եւ այժմ ամժանդակեալ ի Հոգւոյն Սրբոյ՝ ժողովեցից ի սոցանէ կարճ ի կարճոյ զախորժակս ձեր զբանից հանդէս, միայն զճշմարտութեան գնալով զիեսս»¹¹:

Պատմիչը նշում է տեղեկութիւնների համառօտ յիշատակման իր սկզբունքը՝ «կարճ ի կարճոյ», սակայն քիչ անց դրանից շեղում է, երբ ընդարձակ շարադրանքով գրում է Գրիգոր Գ. Պահլավունու կաթողիկոսական ընտրութեան ու գործունէութեան մասին¹²: Այս հատուածի վերջում Սամուէլ Անեցին ուղիղ խօսքով դիմում է Գրիգոր Գ. Պահլավունուն. «Բայց վասն զի զսկիզբն ամաց եւ յաջորդել առաջնորդութեան կամիմք տակաւին նշանակել, եւ այսպիսի յաջողուածք եւ այլ բարեբաղտութիւնք եւ գործք զկնի ամաց ար ըստ արե՛ յաւելաւ, այնր աղագաւ աստանօր թողաք զայլոցն պատմութիւն, գորս եթէ արժանի լինիմք՝ յիրում տեղուց գրեսցոք: Եւ աստանօր զայսոսիկ ծանուցոք մերոյ հրամանատուիդ եւ պատուասիրի»¹³: Այստեղ Սամուէլ Անեցին յատկօրէն Գրիգոր Գ-ին անուանում է իրեն «հրաման տուող», պատուիրատու, մի փաստ, որը որոշ ուսումնասիրողներ զարմանալիօրէն անտեսել են, եւ հիմնուելով ժամանակագրութիւնի վերջում եղած՝ Գրիգոր Գ-ի մահուան 1166 թուականն անցնող յաւելումների թուականների վրայ, երկի պատուիրատու են կարծել Գրիգոր Գ. Տղայ (1173-1193) կաթողիկոսին¹⁴:

1161ին վրաց Գէորգի Գ. թագաւորը (1156-1184) գրաւել է Անին: Սամուէլ Անեցին անդրադառնալով այդ եւ յաջորդ երկու տարիների ղէպքերին, շեշտում է, որ ինքը դրանց ականատեսն էր. «ՈՄ. (1161): Յայսմ ամի թագաւորն Վրաց Գւորգի առ զԱնի՝ ի յունիս ի ԺԳ. (13), եւ ապա յօգոստոս ամսամտին կոտորեաց զՇահիարմէն եւթն հազարաւ՝ զՁՌ.սն (80.000). եւ այսորիկ ակամատես եղաք մեք»¹⁵:

Ըստ պատմիչի, վրացիների յաղթանակները շրջակայ մահմեդական իշխանութիւնների պատասխան գործողութիւնների առիթ դարձան, եւ նրանք Խորասանի սուլթանի գլխաւորութեամբ 1163ին պարտութեան մատնեցին Գէորգիին. «ՈՄԲ. (1163). Ապա զաւրաժողով լիեալ սուլտանն Խորասանայ՝ ելեալ ի դուռն քաղաքիս Անույ եւ զարհուրեցոյց զբնակիչք սորա. յետ Լ. (30) ատուր գնաց զաղտագողի աղուեսաբար եւ հար զթագաւորն Գւորգի եւ զաւար նորա էառ եւ դարձաւ ի տեղի իւր»¹⁶: Սա Սամուէլ Անեցու ժամանակագրութիւնի մէջ եղած հեղինակային վերջին նախադասութիւնն է, որից յետոյ, ժամանակագրութիւնի հնագոյն ընդօրինակութեան (Կամրջաձոր, 1176) մէջ աւարտանշան է դրուած:

1164ի վերջերին Անին կրկին վերադարձուում է Շաղաղեաններին, սակայն այս փաստն արդէն տեղ չի գտել Սամուէլ Անեցու մօտ, քանի որ ժամանակագրութիւնի շարադրանքը նա դադարեցրել է 1163ին¹⁷:

Սամուէլ Անեցու կենսագրութիւնը լրացնում են նրա որդու եւ թոռան մասին պահպանուած տեղեկութիւնները: 1233ին Սամուէլ Անեցու թոռ Աբրահամ Երէջը Անիում գտնուող իր ունեցուածքից արժէքաւոր նուիրատու-

ութիւն է կատարել *Խծկոնքի Վանքին*: Տեղի Ս. Սարգիս եկեղեցու արձանագրութեան մէջ նա յիշում է հօրը՝ Սարկաւազ քահանային, եւ համբաւաւոր պապին՝ վերջինիս յիշատակին նուիրելով կատարած նուիրատուութեան դիմաց ստացած վեց պատարագներից երկուսը¹⁸: Արձանագրութեան շնորհիւ յայտնի է դառնում, որ Սամուէլ Անեցու քահանայ որդին կրել է Սարկաւազ անունը: Կարելի է ենթադրել, որ Սամուէլ Անեցին իր որդուն սակաւ հանդիպող Սարկաւազ անունով կոչել է ի պատիւ սիրելի ուսուցչի՝ Յովհաննէս Սարկաւազի: Հնարաւոր է, որ Սամուէլ Անեցու որդի Սարկաւազ քահանան է 1151ին նորոգել Անիի Ս. Սարգիս եկեղեցին, որը գրակա-նութեան մէջ երբեմն կոչւում է նաեւ Սարկաւազի եկեղեցի¹⁹:

Սամուէլ Անեցու թոռ եւ Սարկաւազի որդի Աբրահամ Երէցից յետոյ այս հեղինակաւոր քահանայական տոհմը շարունակուել է թէ ոչ՝ յայտնի չէ, սակայն տոհմի երեք սերնդի մասին պահպանուած վկայութիւնն ուշագրաւ իրողութիւն է, քանի որ Սամուէլ Անեցին այս առումով թերեւս միակն է հայ միջնադարեան պատմիչների շարքում:

Սամուէլ Անեցու ծննդեան եւ մահուան թուականները ստոյգ յայտնի չեն, ուստի այս մասին արուած ենթադրութիւնները միշտ էլ մօտաւոր են լինելու: Ուսումնասիրողները սովորաբար պատմիչի ծնունդը տանում են ԺԲ դարի առաջին տասնամեակ, մահը՝ նոյն դարի 80ականներ²⁰:

Սամուէլ Անեցին հայրենի քաղաքում ուսանել է Յովհաննէս Սարկաւազի դպրոցում, հաւանաբար 1110-20ականներին (Յովհաննէս Սարկաւազը մահացել է 1129ին): Դրանից յետոյ, հաւանաբար 1130ականներից, քահանայազործել է Կաթողիկէում: Գրիգոր Գ. Պահլաւունի կաթողիկոսից ժամանակագրութիւն կազմելու պատուէր ստանալով՝ շարադրանքը հասցրել է մինչեւ 1163: Ռաֆիկ Վարդանեանի հաշուարկներով Սամուէլ Անեցին *Մեկնութիւն Տումարի* երկը խմբագրել է 1165ին²¹: Քանի որ 1173ին *Ժամանակագրութիւնի* մէջ մի քանի վկայութիւններ են աւելացուել, որոնց հեղինակը Սամուէլ Անեցին չէ, կարծում ենք, որ նա մահացել է մինչեւ այդ թուականը, կամ հենց 1173ին:

ՀԱԿԱՔՄՈՒՆՔ Ի ԳՐՈՑ ՊԱՏՄԱԳՐԱՅ... ԵՐԿԸ

Սամուէլ Անեցին *Ժամանակագրութիւնը* գրել է Եւսեբիոս Կեսարացու (մօտ. 260-340) նշանաւոր *Քրոնիկոնի*²² սկզբունքով՝ ժամանակագրական տարբեր համակարգերի ներդաշնակեցմամբ կազմուած աղիւսակներով: *Ժամանակագրութիւնն* սկսւում է փոքր առաջաբանով, որից յետոյ, առաջին մասում, ուր աղիւսակներ չկան, Ադամից հասնում է մինչեւ Քրիստոսի ծնունդը: Երկրորդ մասը²³, որն աղիւսակներով է (բացառութեամբ համեմատաբար մեծ հատուածների), սկսւում է Քրիստոսի ծննդեան յիշատակութեամբ եւ աւարտւում 1163ին վերաբերող տեղեկութեան արձանագրմամբ: Դրանից տասը տարի անց՝ 1173ին, Սամուէլ Անեցու *Ժամանակագրութիւնին* աւելացուել է 3 կամ 4 տեղեկութիւն, որից յետոյ այն տրուել է ընդօրինակողներին: *Ժամանակագրութիւնի* հնագոյն ձեւագրերում 1163-

1173 *ժամանակամիջոցին վերաբերող այդ տեղեկությունների համեմատական քննությունից երեւում է, որ դրանք պատկանում են այլ հեղինակի*²⁴:

Սամուէլ Անեցու աշխատությունն սկզբնապէս վերնագրուած է եղել՝ «Սամուէլի Քահանայի Հաւաքմունք ի Գրոց Պատմագրաց Յաղագս Գիւտի Ժամանակաց Անցելոց Մինչեւ ի Ներկայ Մայրաքաղ Արարեալ»։ Վերնագրի համապատասխան՝ Ժամանակագրութիւնը մեծապէս քաղաքական աշխատութիւն է։ Հեղինակը բարեխղճօրէն է օգտուել սկզբնաղբիւրներից, յաճախ նրանց նկատմամբ քննական վերաբերմունք հանդէս բերել։ Բացի յայտնի պատմագրքերից, որոնք նա թուարկել է իր երկի սկզբում²⁵, Անեցին օգտագործել է իր ուսուցիչ Յովհաննէս Սարկաւազի պատմական թղթերը։ Հաւանաբար պատուիրատուի ցանկութեամբ՝ նա դրանցից սելջուկների պատմութեանը վերաբերող մի քանի համեմատաբար ծաւալուն մէջբերում է արել եւ դրանով իսկ այդ հատուածները փրկել կորստից, քանի որ թղթերի բնագրերն այժմ կորած են²⁶։ Իր ժամանակի դէպքերը նա ներկայացրել է որպէս ականատես՝ այլ պատմիչներից տարբերուող վերաբերմունք դրսեւորելով այս կամ այն իրադարձութեան նկատմամբ։ Իւրօրինակ է պատմիչի տեսակէտը՝ յատկապէս Անիի պատմութեան կապուած դէպքերի կամ գործիչների վերաբերեալ։

Երկի սկզբում հեղինակը խօսում է ժամանակի բնոյթի մասին՝ «Յերիս որոշմունս բաժանեալ սահմանեցան թիւք ժամանակաց՝ յանցեալն ի ներկայն եւ յապառնին» (էջ 1), ապա անդրադառնում է ժամանակի աստուածաշնչային եւ աստուածաբանական ընկալումներին, օգտուելով հիմնականում Եւսեբիոս Կեսարացուց։ Այնուհետեւ նշում է ժամանակագրութեան անհրաժեշտութեան մասին. «...իւրաքանչիւր ոք ի կորովաբան եւ յիմաստախոտի արանց յազգին իրում զժամանակագրութիւնս կարգեալ ձեռնարկեաց, առ որս երեւելագոյն քան զյոյովս եղի Եւսեբի երանելի...» (էջ 2)։ Յետոյ հեղինակը թուարկում է իրենից առաջ եղած պատմագիրներին, որոնցից օգտուել է, հասնելով մինչեւ Ստեփանոս Տարօնեցի Ասողիկ, ապա ուղիղ խօսքով դիմում է պատուիրատու կաթողիկոսին (էջ 3)։ Պատմիչն այնուհետեւ նշում է առաջին մասի իր հիմնական երկու աղբիւրը՝ Եւսեբիոս Կեսարացուն եւ Մովսէս Խորենացուն, որից յետոյ հակիրճ ներկայացնում է իր երկի ընդգրկումն ու կառուցուածքը. «Եւ նախ յԱդամայ սկսեալ՝ կատարեսցոյք ի Նոյ, եւ անտի մինչեւ ցԱբրահամ, եւ անտի մինչեւ ի ծնունդն Քրիստոսի, եւ ապա ըստ քրոնիկոնին գաւազանօք զրաւեսցոյք ի ներկայս, զաւելորդն թողով եւ զկարեւորսն ի ներքս մուծանելով...» (էջ 3-4)։ Այսպիսով, հեղինակն ինքն է վկայում, որ երկի առաջին մասը հասնում է մինչեւ Քրիստոսի ծնունդը, իսկ երկրորդ մասն արդէն ժամանակագրական աղիւսակներով («քրոնիկոնին գաւազանաւք») Քրիստոսի ծննդից հասնում է մինչեւ «ներկան» (իր ապրած ժամանակը)։

Այդ խոստման համաձայն հասնելով առաջին մասի վերջին, Անեցին կրկին դիմում է պատուիրատուին. «Արդ, վասն զի ըստ կանխադրի խոստմանցն ժամանեցաք յայտսիկ, ուրանար կէտ եղեալ էր բանից, հասանել ի յայտնութիւն մարմնացելոյ Բանին Աստուծոյ...» (էջ 51)։ Շարու-

նակելով պատուիրատուին ուղղուած խօսքը, նա հատուածը եզրափակում է ժամանակագրական սիւնակների մասին ծանուցմամբ. «Սկսեալ յառաջին ամէն ի ծննդեանէն Քրիստոսի, զոր կարգեցից բուն թուական, եւ զթագաւորս Հռոմոնց, Հրէից եւ Պարսից եւ զմերոյ ազգի, ստոյգ գտակաւ գրեցից անյապաղ» (էջ 52):

Սամուէլ Անեցու ժամանակագրական աղիւսակների սկզբնամասի հիմնական տեղեկութիւնները՝ Քրիստոսից մինչեւ 325 թուականը, բառացի կամ որոշ համառօտումներով քաղուած են Եւսեբիոս Կեսարացու *Քրոնիկոնից*: Այստեղից են վերցուած հռոմէական կայսրերի եւ հրեայ թագաւորների տարիները՝ ժամանակագրական սիւնակներով, նաեւ Երուսաղէմի, Ալեքսանդրիայի եւ Անտիոքի եպիսկոպոսների մասին բոլոր տեղեկութիւնները: Իսկ Խորենացուց նա քաղել է պարսից եւ հայոց Արշակունիների գահակալութեան թուերն ու տարեքանակները, հայոց առաջին կաթողիկոսների թուականները, որոնք, սակայն, զգալիօրէն տարբերուած են նրանց՝ այժմ հայագիտութեան մէջ հայ եւ օտար այլ աղբիւրների տուեալներով ճշտուած տարեթուերից:

Քանի որ աղիւսակային մասը ժամանակագրական տարբեր համակարգերը ներդաշնակեցնելու առումով աւելի բարդ էր, հեղինակը ստիպուած է եղել քննական մօտեցում ցուցաբերել, ճշգրտել թագաւորների գահակալման, կաթողիկոսների աթոռակալութեան թուականները: Եւ քանի որ թուականները նշանակուած էին յաջորդաբար (ուղղահայեաց կարգով), որեւէ մէկի իշխանութեան թէկուզ մէկ տարուայ տարբերութիւնը մեքենաբար փոխում էր նաեւ յաջորդի թուականները: Մինչդեռ Սամուէլ Անեցու ունեցած աղբիւրները տարբեր տեղեկութիւնների առումով յաճախ անմիաբան էին, ուստի, հասնելով Տրդատ Գ-ի եւ Գրիգոր Լուսաւորչի ժամանակներին, պատմիչը ստիպուած է եղել բացատրութիւն տալ, տարակուսել՝ «յաղագս անմիաբան գրելոյ պատմագրացն» եւ փորձել գտնել ժամանակագրական ճշմարիտ պատկերը²⁷:

Աղիւսակների մասում էջի կենտրոնն զբաղեցնում են ժամանակագրական հինգ ուղղահայեաց սիւնակները, ուր առաջին սիւնակում նշուած է փրկչական թուականը, յաջորդ սիւնակներում հռոմէական (այնուհետեւ՝ բիւզանդական) կայսրերի տարիները, սկզբնական մասում՝ հրէական ու պարսից թագաւորների թուականները (աւելի ուշ՝ պարսից թագաւորների սիւնակում արաբ ամիրապետերի կառավարման տարիները) եւ հայոց թագաւորների տարիները²⁸: 72 թուականից յետոյ հրէական թագաւորների անունները դադարում են, եւ սիւնակները դառնում են չորսը: Հայաստանում քրիստոնէութեան հաստատումից յետոյ՝ Գրիգոր Լուսաւորչից սկսած, աւելանում է հայոց կաթողիկոսների տարիները ներկայացնող սիւնակը (5 սիւնակ), իսկ հայոց մեծ թուականի հաստատումից յետոյ՝ այդ թուականի սիւնակը (6 սիւնակ)²⁹: Սրանից զատ, սիւնակների սկզբում, դրանցից դուրս դրուած է ողիմպիականների թուականը (սկսուած է Ք.ա. 776ից):

Աղիւսակների կարգի փոփոխմանը Սամուէլ Անեցին անդրադառնում է Բագրատունեաց Թագաւորութեան անկման մասում: Նշելով, որ հայոց թագաւորների իշխանութեան յաջորդական թուականներն այլեւս չեն լինելու, հեղինակը ասում է, որ այդտեղից սկսած մինչեւ իր ապրած ժամանակը պահպանում է չորս սիւնակ՝ փրկչական թուականը, կայսրերի տարիները, հայրապետերի տարիները եւ հայոց թուականը³⁰:

Ժամանակագրական սիւնակների աջ ու ձախ կողմում գծուած են աղիւսակներ՝ նախատեսուած համապատասխան տեղեկութիւնների համար (ընդարձակ շարադրանքների տեղերում աղիւսակներն ընդհատուած են): Ա. Տէր-Միքէլեանը 1893ի հրատարակութեան մէջ աղիւսակները համարել է «անընթերցանելի... ժամանակագրական համեմատութեան բազմաթիւ սխալներ, - ունեցող եւ որոշել, - ... դուրս ձգել այդ տաղտկալի աղիւսակն, որ ոչ մի օգուտ չկարէ տալ՝ բացի խանգարիչ լինելուց պատմութեան եւ նորա ամբողջ ընթացքին» (էջ ԻԵ.-ԻԷ.): Նկատենք, որ Ժամանակագրութիւնի լատիներէն եւ Ֆրանսերէն թարգմանութիւնները հրատարակուել են աղիւսակներով:

Հարկ է նշել, որ աղիւսակները հրատարակութեան տեսակէտից իրօք որոշ դժուարութիւն ունեն, քանի որ երբեմն մակագրութիւնները ոչ միայն աջ ու ձախ կողմերում են, այլեւ հենց նեղ սիւնակներում: Ժամանակագրական անհամապատասխանութիւններ աղիւսակներում նոյնպէս կան³¹, սակայն դէպքերի յիշատակման այս եղանակը հնարաւորութիւն է տալիս որեւէ իրադարձութեան թուականը տեսնել ժամանակագրական տարբեր հարթութիւններում: Այսինքն որեւէ տեղեկութիւն-փաստ կարելի է տեսնել ոչ միայն որոշակի թուականի դիմաց, այլեւ իմանալ թէ դա, օրինակ, բիւզանդական ո՞ր կայսեր, արաբական ո՞ր ամիրապետի, հայոց ո՞ր թագաւորի եւ կաթողիկոսի ո՞րերորդ տարուայ մէջ է եղել:

Մխիթար Անեցու Պատմութիւնի հրատարակիչ Հայրապետ Մարգարեանը պատմիչի աղբիւրներին անդրադառնալիս նշում է, որ նա Սամուէլ Անեցու Ժամանակագրութիւնը համարում էր ամենահաւաստին, «քանի որ վերջինիս հեղինակն արդէն յաղթահարել էր այն տքնաջան աշխատանքը, որն անհրաժեշտ էր բոլոր աղբիւրները պրպտելով՝ համապարփակ ու ամփոփ ժամանակագրութիւն կազմելու համար»³²:

1893ի հրատարակութեան մէջ աղիւսակները հանուելուց յետոյ թողնուել է հիմնականում փրկչական թուականը, հազուադէպ՝ նաեւ հայոց թուականը. այս հանգամանքը վնասել է բուն ժամանակագրութիւնը, քանի որ տարբեր դէպքերի թուականներն աւելի ստոյգ են հենց հայոց թուականով: Իսկ Ժամանակագրութիւնի մէջ փրկչական թուականի վերաբերեալ ժամանակին Լեւոն Խաչիկեանի եւ Վազգէն Յակոբեանի կատարած կարեւոր ճշտումը, ցաւօք, ծանօթ չի եղել ուսումնասիրողներից շատերին, եւ նրանք, Սամուէլ Անեցու Ժամանակագրութիւնից տուեալներ վերցնելով, փաստօրէն, երբեմն ներկայացրել են անստոյգ թուականներ:

Սամուէլ Անեցու Ժամանակագրութիւնը շարունակած Ստեփանոս Օրբելեանի Ժամանակագրութիւնի Աշոտ Աբրահամեանի պատրաստած հրա-

տարակուլիտեան առիթով գրուած գրախօսականում իրաչիկեանը եւ Յակոբեանը նշել են. «Սամուէլ Անեցին հետեւել է այն տոմարագետներին, որոնք Քրիստոսի ծննդեան տարեթիւը դրել են այժմ գործող թուականից 2 տարի առաջ, ուստի Սամուէլի, ինչպէս եւ Ստեփանոսի ժամանակագրութեան մէջ, ամենուրեք, քրիստոնէական եւ հայկական թուականների տարբերութիւնը ոչ թէ 551, այլ 553 տարի է»³³: Այս դիտողութիւնն ընդունել է Աբրահամեանը, որը Յովհաննէս Սարկաւազի մատենագրութեան հատորի մէջ նշել է. «Միջնադարեան հայ մատենագրութեան մէջ գործող քրիստոնէական թուականն այն թուականը չէ, ինչ որ գործ ենք անում մենք ներկայումս, այլ քրիստոնէական այսպէս կոչուած հայկական հաշուամների թուականը, որը երկու տարով աւելի է, քան մեր ներկայումս գործածած թուականը, այլ խօսքով ասած, ըստ հայկական հաշուարկների, Քրիստոսի ծնունդը եղած պէտք է լինի մեր ներկայ թուականից 2 տարի առաջ»³⁴: Սամուէլ Անեցին այս հարցում հետեւել է իր ուսուցչին՝ Յովհաննէս Սարկաւազին, ըստ որի՝ «Ի ծննդեմէն Քրիստոսի ի հայ թուականն՝ ՇԾԳ՝ 553»³⁵: Սոյն սկզբունքը որդեգրելով, Անեցին ժամանակագրութիւնի փրկչական ՇԾԴ՝ 554 թուականի դիմաց նշել է հայոց Ա. (1) թուականը³⁶:

	Հայկական քրիստոնէական (փրկչական) թուական, ըստ Սամուէլ Անեցու եւ այլոց	
	Ա. (1)	
Արդի թուագրում	Բ. (2)	
1	Գ. (3)	
2	Դ. (4)	
3	Ե. (5)	
4	Չ. (6)	
...	...	
549	ՇԾԱ՝ 551	
550	ՇԾԲ՝ 552	
551	ՇԾԳ՝ 553	Հայոց թուական
552	ՇԾԴ՝ 554	Ա. (1)
553	ՇԾԵ՝ 555	Բ. (2)
554	ՇԾԶ՝ 556	Գ. (3)
555	ՇԾԷ՝ 557	Դ. (4)
556	ՇԾԸ՝ 558	Ե. (5)

1893ի տպագիրը մեծապէս կը շահէր, եթէ նրա մէջ նշուէր նաեւ հայոց թուականը: Ուսումնասիրողները երբեմն որոշ թերահաւատութեամբ են վերաբերուել Սամուէլ Անեցու յայտնած տեղեկութիւնների թուագրմանը, քանի որ Վաղարշապատի տպագրում առկայ թուականները յաճախ տարբերուում են այս կամ այն դէպքի վերաբերեալ այլ աղբիւրներից յայտնի, ճշտուած թուագրութիւնից: Բերենք մէկ օրինակ. Բագրատունի առաջին

Թագաւոր Աշոտ Ա-ի գահակալութեան առաջին տարին տպագրի մէջ նշուած է միայն փրկչական թուականով՝ ՊՁԷ՝ 887 (էջ 95): Այլ աղբիւրներէրից յայտնի է, որ Աշոտը թագադրուել է 885ին: Սամուէլ Անեցու ձեռագրերում Աշոտի գահակալումը հայոց թուականով նշուած է ՅԼԴ՝ 334+551=885: Այսինքն՝ անկախ այն բանից, որ մեր ժամանակագիրը հայոց թուականի հաստատումը դնում է 553 թուականի ներքոյ, նա գիտի, որ Աշոտը թագադրուել է հայոց ՅԼԴին եւ այդպէս էլ նշում է իր ժամանակագրութիւնի մէջ: Ըստ էութեան, Անեցին այս նոյն թուականն է յայտնում նաեւ փրկչական թուականով, եթէ նկատի ունենանք վերը բերուած բացատրութիւնը եւ անտեսենք յաւելեալ երկու տարին (887-2=885): Նկատենք սակայն, որ սա անփոփոխ սկզբունք չէ: Ժամանակագրութիւնից օգտուելիս տարբերակուած մօտեցում է պահանջուում իւրաքանչիւր տեղեկութեան թուականի դէպքում:

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԻ ՁԵՌԱԳՐԵՐԸ

Սամուէլ Անեցու ժամանակագրութիւնը պահպանուել է հիմնականում ամբողջական եւ մի քանի մասնակի ընդօրինակութիւններով՝ թուով 70: Ժամանակագրութիւնի առաւել մեծ թուով օրինակներ Մաշտոցեան Մատենադարանում (ՄՄ) են՝ 35, այնուհետեւ՝ 13 ձեռագիր պահուում է Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանի Սրբոց Յակոբեանց Վանքում, եւս 13 ձեռագիր կայ Մխիթարեան Միաբանութեան Վենետիկի Մատենադարանում: Վիեննայի Մխիթարեաններն ունեն 4 ձեռագիր, մէկական օրինակներ կան Զմմառում, Փարիզում, Տիւբինգէնում, Հռոմում, Սանկտ Պետերբուրգում: Ձեռագրերի համարական ցանկն ըստ պահպանման վայրերի հետեւեալն է.- Մաշտոցեան Մատենադարանի ձեռ. Հ^{մր} 481, 1483, 1484, 1486, 1717, 1718, 1719, 1770, 1865, 1869, 1897, 1898, 1899, 2965, 3072, 3613, 3681, 3965, 5120, 5596, 5613, 5619, 5889, 6331, 6354, 6483, 6644, 7261, 8481, 9795, 9796, 10200, 10202, 10485, 10983. Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Վանքի ձեռ. Հ^{մր} 69, 169, 343, 743, 783, 1051, 1221, 1288, 1553, 1801, 2170, 3397, 3701, Վենետիկի Մխիթարեան Մատենադարանի ձեռ. Հ^{մր} 288, 511, 721, 869, 911, 959, 1023, 1227, 1246, 1253, 1734, 1769, 2261, Վիեննայի Մխիթարեան Մատենադարանի ձեռ. Հ^{մր} 65, 89, 167, 465, Ֆրանսիայի Ազգային Գրադարանի ձեռ. Հ^{մր} 192, Զմմառի Վանքի ձեռ. Հ^{մր}, 207, Տիւբինգէնի Գրադարանի ձեռ. Հ^{մր} 93, Հռոմ, Վատիկանի ձեռ. Հ^{մր} 3, Սանկտ Պետերբուրգի Արեւելագիտութեան Ինստիտուտի ձեռ. Հ^{մր} B 280:

Ժամանակագրութիւնի ձեռագրերի տուեալների քննութիւնը թոյլ է տալիս անել մի քանի ընդհանրացում: Ըստ դարերի՝ ընդօրինակութիւնների ժամանակագրական դասակարգումը հետեւեալն է.- ԺԲ. դ.՝ 3 օրինակ, ԺԳ.՝ 5, ԺԴ.՝ 3, ԺԵ.՝ 2, ԺԶ.՝ 8, ԺԷ.՝ 31, ԺԸ.՝ 7, ԺԹ.՝ 6: Հետեւաբար՝ ամենաշատ օրինակութիւնները վերաբերում են ԺԷ. դարին:

Տարբեր ընդօրինակութիւններում բուն ժամանակագրութիւնի կամ շարունակութեան աւարտի թուականները հետեւեալ պատկերն ունեն. 1173 թուականով աւարտուող օրինակների թիւը՝ 9, 1180ականներին աւարտ-

ուողները՝ 2, մինչև ժԳ. դար շարունակուած ձեռագրերը՝ 8: Աւելի շատ յաւելումներ ու լրացումներ արուել են ժԴ. դարում: Այստեղ առանձնա- նում է ընդօրինակութիւնների մի խումբ՝ 9 մատեան, ուր *ժամանակագ- րութիւնը* հասցուած է մինչև 1335: Մինչև 1338-1348 հասնող օրինակները 7ն են, 1423-1425 հասնող օրինակները՝ 4: Վեց ձեռագրում *ժամանակագ- րութիւնը* շարունակուած է մինչև 1660-90ականները, մինչև ժԸ. դար է հասնում 3 ձեռագրում:

Գրչութեան վայրերի պատկերն այս է.- հնագոյն ձեռագրերը ծագում են Անիի շրջանից (Կամրջաձոր, Հոռոմոս, Անի): ժԶ.-ժԷ. դդ. *ժամանա- կագրութիւնի* 5 օրինակում արուել է Եւզոկիայում (Թոխաթ), միւս կենտ- րոններից պահպանուել են երկուական (Հոռոմոս, Ուռհա, Բաղէշ, Ամիթ, Կամենէց, Կ.Պոլիս) եւ մէկական օրինակներ (Ուռընկար, Կարին, Գետկայ Վանք, Սանահին, Ամրդուլ Վանք, Տրապիզոն, Սեբաստիա, Կեսարիա, Ար- մաշ, Երուսաղէմ, Լվով): *ժամանակագրութիւնի* հեղինակային բնագիրը վերականգնելու համար առաջնային նշանակութիւն ունեն ՄՄԻ երկու՝ 1176ի Կամրջաձորում (Հ^մ 5619) եւ 1177ի հաւանաբար Հոռոմոսում (Հ^մ 3613) ընդօրինակուած ձեռագրերը:

ՃԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԻ ԼՐԱՅՈՒՄՆԵՐԸ

ժամանակագրութիւնի ձեռագրերը պարունակում են ոչ միայն Սա- մուէլ Անեցու հեղինակային բնագիրը, այլեւ տարբեր ժամանակ այդոց կա- տարած բազմաթիւ յաւելումներ ու լրացումներ, որոնք նոյնպէս աղբիւրա- գիտական կարեւոր արժէք ունեն: *ժամանակագրութիւնի* գրչութեան ա- ղիւսակային սկզբունքը, ուր էջերի կենտրոնում տարիների թուաշարքն է, իսկ աջ ու ձախ սիւնակները յատկացուած են տեղեկութիւններին, յաճախ բաւական ազատ գրադաշտ է թողնում, որն էլ այդ մասերում յետագայում զանազան նոր տեղեկութիւններ աւելացնելու հնարաւորութիւն է տուել: Ընդօրինակող գրիչները, ստացողներն ու բանիմաց ընթերցողները յետա- գայում իրենց յայտնի տարբեր տեղեկութիւններով իւրովի «լրացրել» են ա- զատ տեղերը: Բնականաբար, յաջորդ գրիչներն ընդօրինակել են նաեւ այդ տեղեկութիւնները: Այսպիսով, *ժամանակագրութիւնի* ձեռագրերում ժա- մանակի ընթացքում աւելացուել են զանազան յայտնի եւ անյայտ անձանց կատարած հարիւրաւոր յաւելումներ: Միեւնոյն ժամանակ, ընդօրինակող- ները եւ ուրիշներ ո՛չ միայն տեղեկութիւններ են մուծել *ժամանակագրութ- իւնի* տարբեր մասերում, այլեւ շարունակել են եւ հեղինակի նշած վերջին՝ 1163 թուականից հասցրել մինչև իրենց ապրած ժամանակը, որոշ ձեռագ- րերում՝ ընդհուպ մինչև ժԸ. դար: Հաւանաբար նրանք այդպէս վարուե- լու համար հիմնաւորում են տեսել Սամուէլ Անեցու երկի վերնագրում՝ *Յա- ղազս Գիւտի ժամանակաց Անցելոց Մինչև Ի Ներկայս*, արձանագրելով ի- րենց «ներկայ» ժամանակի դէպքերը: ժԳ. դարի վերջերին հենց այդպէս է վարուել Սիւնեաց մետրոպոլիտ եւ պատմիչ Ստեփանոս Օրբէլեանը, որը ձեռքի տակ ունենալով Սամուէլ Անեցու *ժամանակագրութիւնի* լրացուած եւ Հայոց ՈՒԲ՝ 1193 թուականին հասցուած մի օրինակ, պատշաճ է համա-

րել այն շարունակել, ինչպէս ինքն է գրում՝ «...քերել հասուցանել մինչ ի մերս ժամանակ»³⁷, եւ հասցրել է 1290:

Այսպիսով, մի կողմից զանազան ընդմիջարկութիւններ ստանալով, միւս կողմից տարբեր հեղինակների ձեռքով շարունակուելով, Սամուէլ Անեցու երկը դարերի ընթացքում դարձել է պատմական ամենատարբեր տեղեկութիւնների իւրօրինակ հաւաքածո: Դրա շնորհիւ *ժամանակագրութիւնի* ձեռագրերից շատերը պարունակած նիւթի առումով ստացել են միանգամայն ինքնուրոյն արժէք:

Հետաքրքիր է, որ միջնադարեան գրիչները չեն կասկածել, որ *ժամանակագրութիւնը* պէտք է անընդհատ շարունակուել: Նրանցից ոմանք ձեռագրում իրենց ապրած ժամանակին վերաբերող նշումներն անելուց յետոյ ժամանակագրական աղիւսակներ են գծել նաեւ գալիք ժամանակների համար: Զեռագրերից մէկի՝ ԺԸ. դարի սկզբներին ապրած գրիչը մի քանի թերթի վրայ աղիւսակներ գծելով, տարիների թուաշարքը հասցրել մինչեւ փրկչական ՄԻ՝ 2020 եւ Հայոց ՌՆԿԹ՝ 2020 թուականը (ՄՄ ձեռ. Հ՝ 3965, 86բ):

Սամուէլ Անեցու *ժամանակագրութիւնի* հիմքի վրայ, որպէս նրա շարունակութիւն է ստեղծուել Ստեփանոս Օրբելեանի *ժամանակագրութիւնը*, որը հրատարակել է Աշոտ Աբրահամեանը³⁸: Նոյն սկզբունքով են կազմուել եւս երեք անանուն հեղինակների ժամանակագրութիւններ, որոնք հրատարակել են Յակոբեանը³⁹, Նորայր Եպս. Պողարեանը⁴⁰ եւ Լեւոն Տէր-Պետրոսեանը⁴¹:

ժամանակագրութիւնի ձեռագրերում եղած յաւելումների ու լրացումների մի զգալի մասը տեղ է գտել Տէր-Միքէլեանի հրատարակութեան մէջ, մի մասը՝ վերը նշուած հրատարակութիւններում. ՄՄի 14 ձեռագրից քաղուած նիւթերի մի այլ խումբ վերջերս մենք ենք հրատարակել⁴²: Այսուհանդերձ, *ժամանակագրութիւնի* մեզ ո՛չ հասու ձեռագրերում գտնուող որոշ յաւելումներ դեռեւս մնում են անտիպ եւ անծանօթ⁴³:

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Սամուէլ Անեցու *ժամանակագրութիւնը* հրատարակուել է, ինչպէս ասացինք, նախ օտարալեզու թարգմանութիւններով, աւելի ուշ՝ հայերէնով: Հայր Յովհաննէս Զոհրաբեանը եւ Ա. Մայր Վատիկանի Հ՝ 3 Ժողովածուի (1287 թ.) մէջ առկայ օրինակութեան հիման վրայ այն թարգմանել են լատիներէն եւ 1818ին հրատարակել Միլանում⁴⁴. 1839ին այս գիրքը վերահրատարակուել է Հռոմում⁴⁵:

Սանկտ Պետերբուրգի Կայսերական Ակադեմիայի (այժմ Ռուսաստանի Գիտութիւնների Ակադեմիայի Արեւելագիտութեան Ինստիտուտ) B 280՝ ԺԷ. դարի ձեռագրի հիման վրայ Մ. Բրոսէն 1876ին Անեցու երկը հրատարակել է Փրանսերէն թարգմանութեամբ⁴⁶: Առաջաբանում հրատարակիչը նշում է, որ Սամուէլ Անեցու երկը բաղկացած է երկու մասից, առաջինը քաղագրութիւն է Եւսեբիոս Կեսարացուց, որը պատմական նորութիւն չունի, ուստի ինքը զանց է առնում, իսկ երկրորդ՝ աղիւսակային մասը, հեղի-

նակային շարադրանքով հասնում է մինչև 1179, ապա շարունակում մինչև 1346, որն ինքը ներկայացնում է եւ ծանօթագրում ըստ կարողութեան⁴⁷ : Այնուհետեւ Բրոսէն ներկայացնում է Անեցու երկը ժամանակագրական աղիւսակներով, ընդ որում՝ իւրաքանչիւր բացուածքում աջակողմեան էջը յատկացնում է բնագրին, իսկ ձախակողմեանը՝ աջում եղած նիւթին վերաբերող ծանօթագրութիւններին:

Սանկտ Պետրբուրգի ձեռագրում Սամուէլ Անեցու բուն ժամանակագրութեան վերջին նշումը վերաբերում է 1173ին՝ Գրիգոր Տղայի ամբողջակութեանը, ինչպէս հնագոյն ձեռագրերում է: Դրան յաջորդում է Անեցու երկի աւարտի մասին յետագայի ծանուցումը («Աստանօր գտեղի առեալ կացին շարագրութիւնը գեղեցկաբանին Սամուէլի...»), որից յետոյ *ժամանակագրութիւնը* շարունակում է մինչև 1346ին Կամախում տեղի ունեցած դէպքի յիշատակումը⁴⁸ :

Անեցու երկի հայերէն միակ հրատարակութիւնը, ինչպէս վերելում նշեցինք, Վաղարշապատում 1893ին հրատարակել է Տէր-Միքէլեանը, ձեռքի տակ ունենալով Էջմիածնի Մատենադարանի 13 ձեռագիր, հնագոյնը՝ ԺԳ դարի (ՄՄ ձեռ. Հ¹⁰ 1898), միւսները՝ ԺԶ-ԺԸ դարերի: *ժամանակագրութիւնը* նա ներկայացրել է յետագայի յաւելումներով, քանի որ իր ունեցած մատենաները Սամուէլ Անեցու հեղինակային բնագիրն ու յետագայի յաւելումները տարանջատելու հնարաւորութիւն չեն տուել⁴⁹ :

Վաղարշապատի հրատարակութիւնը բաղկացած է առաջաբանից, ուր հրատարակիչը ներկայացրել է Սամուէլ Անեցու կենսագրութիւնը, համառօտ՝ հրատարակութեան համար օգտագործուած ձեռագրերը, իւրովի հիմնաւորել է ժամանակագրական աղիւսակների անտեսումը (էջ Գ.-Լ.): Ապա ներկայացուած է *ժամանակագրութիւնի* բնագիրը (էջ 1-160): Բնագրի հիմք է դարձրել իր օգտագործած մատենաներից Բ. օրինակը (ՄՄ ձեռ. Հ¹⁰ 1899. 1676 թ. Ամբղոլու Վանք, գրիչ՝ Պօղոս Գաւառցի), իսկ միւսները համեմատել է նրա հետ: Ըստ այդ ձեռագրի, հրատարակիչը ժամանակագրութիւնը հասցրել է մինչև 1335, ապա առանձին ենթավերնագրի տակ ներկայացրել «Շարունակութիւն Այլ Օրինակներից» (էջ 161-174), որից յետոյ ԺԳ. օրինակից քաղել է 1392-1665 թվականներին վերաբերող տեղեկութիւններ (էջ 175-180): Ապա «Յաւելուածներ» բաժնում ներկայացրել է յարակից հինգ պատմական բնագիր (էջ 183-243) եւ գիրքն աւարտել ընդհանուր բնոյթի ծանօթագրութիւններով (էջ 245-301). անուանացանկեր չի կազմել:

Վաղարշապատի հրատարակութեան մէջ յետագայի յաւելումները չափազանց մեծ տեղ ունեն: Օրինակ, 1000-1163 ժամանակամիջոցին վերաբերող մասի մէջ Սամուէլ Անեցու հեղինակային շարադրանքը ամբողջի միայն մէկ երրորդ մասն է: Յաւօք, հետազօտողներից ոմանք այս հանգամանքին անծանօթ լինելով, այս հրատարակութեան մէջ առկայ յետամուտ տեղեկութիւնները համարել են հեղինակինը եւ նրանց մէջ առկայ սխալների ու հակասութիւնների համար երբեմն յանիրաւի քննադատել են նրան: Հրատարակութեան մէջ առկայ յաւելումների պատճառով սխալ պատկերացումներ են առաջացել նաեւ հեղինակի կենսագրութեան վերաբերեալ, ան-

գամ նրա պատուիրատուի ինքնութեան հարցը երկար ժամանակ անորոշ է մնացել:

Այժմ Մաշտոցեան Մատենադարանում հրատարակութեան է պատրաստուում Սամուէլ Անեցու *Ժամանակագրութիւնի* համեմատական բնագիրը հնագոյն չորս մատենաների հիման վրայ: Ինչ վերաբերում է Սամուէլ Անեցու *Ժամանակագրութիւն* մուծուած կամ որպէս շարունակութիւն աւելացուած՝ պատմական հարուստ նիւթեր պարունակող յետագայ յաւելումներին, որոնց միայն մի մասն է տեղ գտել Վաղարշապատի հրատարակութեան մէջ, ապա դրանք գումարուելով *Ժամանակագրութիւնի* տարբեր ձեւագրերից քաղուած՝ հրատարակուած կամ անտիպ նիւթերին եւ տարբեր շարունակողների հեղինակած մի քանի մանր ժամանակագրութիւններին, հրատարակուելու են առանձին գրքով:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- ¹ Երկի երկար վերնագիրը չկրկնելու համար այն անուանում ենք *Ժամանակագրութիւն*՝ որպէս յատուկ անուն:
- ² Տե՛ս՝ Կարէն Մաթեոսեան, *Սամուէլ Անեցու Ժամանակագրութեան Զեռագրերը Եւ Նորայայտ Լրացումները*, Երեւան, «Նաիրի», 2009, էջ 5-98:
- ³ Սամուէլ Անեցու կենսագրութեան վերաբերեալ տե՛ս՝ Հայր Ղեկոնդ Ալիշան, *Շնորհալի Եւ Պարագայք Իւր*, Վենետիկ, Մխիթարեան Հրատ., 1873, էջ 121-2. նաեւ՝ *Սամուէլի Քահանայի Անեցոյ Հաւաքմունք Ի Գրոց Պատմագրաց՝ Յաղագս Գիւտի Ժամանակաց Անցելոց Մինչեւ Ի Ներկայս Ծայրաքաղ Արարեալ*, յառաջաբանով, համեմատութեամբ, յաւելուածներով եւ ծանօթութիւններով Արշակ Տէր-Միքէլեանի, Վաղարշապատ, Ս. Էջմիածնի Հրատ., 1893, էջ Ե. (այսուհետեւ՝ համապատասխան մէջբերումները կը կատարուեն այս գրքից)։ նաեւ՝ Ա. Աբրահամեան, «Սամուէլ Անեցու Տոմարական Եւ Տիեզերագիտական Աշխատութիւնները», *Էջմիածին*, 1952, թիւ Ա., էջ 31. նաեւ՝ Մանուկ Աբեղեան, *Երկեր, Հտր. Դ.*, Երեւան, ՀՍՄՀ ԳԱ Հրատ., 1970, էջ 94. նաեւ՝ Լեւոն Բաբայան, *Դրուագներ Հայաստանի Զարգացած Ֆէոդալիզմի Դարաշրջանի Պատմագրութեան*, Երեւան, ՀՍՄՀ ԳԱ Հրատ., 1981, էջ 176. նաեւ՝ *Մաթեոսեան, Սամուէլ Անեցու*, էջ 10-29:
- ⁴ Կարէն Մաթեոսեան, «Յովհաննէս Սարկաւազի Գործունէութիւնն Անիում», *Էջմիածին*, 2005, է-Ը., էջ 59-72:
- ⁵ Նոյն, էջ 128:
- ⁶ Աբրահամեան, էջ 30-36: Այս գործը շարադրուած է հարց ու պատասխանի ձեւով, ընդ որում՝ Սամուէլ Անեցին օգտուել է Անանիա Շիրակացու *Քննիկոն* աշխատութեան տոմարագիտական բաժնից, երբեմն առանձին հատուածներ նոյնութեամբ պատճէնելով: Ցաօք, պատուիրատուի վերաբերեալ - անունից բացի - ոչինչ յայտնի չէ:
- ⁷ Բարսեղ Ա. Անեցին 1105ին Անիից Կիլիկիայի սահմանների մօտ գտնուող Քեսունի հայկական իշխանութիւն մեկնեց մահամերձ Գրիգոր Բ. Վկայասէր կաթողիկոսի կանչով, որի մահից յետոյ մնաց Քեսունի Կարմիր Վանքում: Բարսեղ Կաթողիկոսը դժբախտ պատահարի հետեւանքով իր մահկանացուն կնքեց 1113ին, բայց հասցրեց որպէս իր յաջորդ հաստատել երիտասարդ Գրիգոր Գ.ին՝ Գրիգոր Վկայասէրի քոջ թոռանը: Դրանից երկու տարի անց Քեսունի իշխանութիւնը վերացաւ եւ Գրիգոր Գ.ը իր եղբայր Ներսէս Շնորհալու հետ տեղափոխուեց Տլուք գաւառի Ծովք փոքրիկ ամրոցը, որը կաթողիկոսի համար այնքան էլ ապահով հանգրուան չէր:
- ⁸ Անեցի, էջ 127, հմմտ.՝ ՄՄ ձեռ. թիւ 5619, էջ 105ա:

- ⁹ 1064ին սելջուկները գրաւելով Անին, Կաթողիկէ եկեղեցին վերածել էին մզկիթի: Դրանից 60 տարի անց Աբուլսուար ամիրան իլլաթում մի մեծ մահիկ պատրաստելով՝ բերում, բարձրացնում է Կաթողիկէի դմբէթին: Քաղաքի հայ բնակչութիւնը չի հանդուրժում այդ արարքը եւ դիմում վրաց Դաւիթ Դ. Շինարար (1089-1125) թագաւորին, որը 1124ին արշաւելով, հեշտութեամբ գրաւում է քաղաքը, գերում ամիրային եւ նրա ընտանիքը: Վրաց արքան վերստին օծել է տալիս Կաթողիկէն: Աբուլսուարի անդրանիկ որդին՝ Խորասանում գտնուող Փատլունը, կատարուածի մասին տեղեկանալով՝ շտապում է Անի եւ պաշարում քաղաքը: Որոշ պայքարից յետոյ վրացիներն ստիպուած են լինում Անին յանձնել Փատլունին, պայմանով, որ Կաթողիկէն հայերից չվերցուի: Այդ ժամանակ երկիրը թէեւ մասամբ խաղաղուած է, սակայն Անին մատնուած է թշուառութեան: Այս դէպքերի պատճառով խափանուած է Գրիգոր Գ-ի Անիում հաստատուելու ծրագիրը, որը, Սամուէլ Անեցու խօսքերով, յարուցում է հայրապետի գայրոյթը. «յորժամ լուս զհամբաւս զայս՝ առաւել զայրացաւ տրտմագին ցասմամբ առ գործողս իրին» (Անեցի, էջ 127, հմմտ.՝ ՄՄ ձեռ. Հ^մ 5619, էջ 104բ-5ա):
- ¹⁰ Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, Վենետիկ, Մխիթարեան Հրատ., 1956, էջ 168. նաեւ՝ Կ. Մաթեւոսեան, Անի, Ս. Էջմիածին, Ս. Էջմիածնի Հրատ., 1997, էջ 61-62:
- ¹¹ Անեցի, էջ 3: Մարդկութեան պատմութիւնը սկսելով Ադամից եւ հասցնելով մինչեւ Յիսուսի ծնունդը, պատմիչը մէկ անգամ եւս անուանապէս դիմում է պատուիրատուին. «Արդ, ո՞վ սրբագգեաց տէր իմ Գրիգոր, հարկեցայ ի թախանձելոյ ձեր, զեղկելի անձն իմ, ետու զանարիեստ անձն իմ ի սշակութիւն այս գործոյ» (էջ 51):
- ¹² Գրիգոր Լուսաւորչից սկսած բոլոր կաթողիկոսներին Սամուէլ Անեցին մի քանի բառ կամ մի քանի տող է նուիրել, իսկ Գրիգոր Գ. Պահլաւունու գահակալմանը՝ ձեռագրական մի քանի էջ (էջ 122-123):
- ¹³ Անեցի, էջ 123, հմմտ.՝ ՄՄ ձեռ. Հ^մ 5619, էջ 102աբ:
- ¹⁴ Այս մասին հանգամանօրէն տես՝ Մաթեւոսեան, Սամուէլ Անեցու, էջ 34-46:
- ¹⁵ ՄՄ ձեռ. թիւ 5619, էջ 106բ-7ա. հմմտ.՝ Անեցի, էջ 137-138:
- ¹⁶ ՄՄ ձեռ. թիւ 5619, էջ 106բ-7ա. հմմտ.՝ Անեցի, էջ 137-138: Այս դէպքերի մասին յայտնում են նաեւ այլ հեղինակներ, սակայն Սամուէլ Անեցու հաղորդումն աչքի է ընկնում ականատեսի անմիջականութեամբ: Նա հայ հեղինակներից միակն է, որը նշում է, թէ վրաց թագաւորի պարտութիւնը տեղի է ունեցել թշնամու անակնկալ յարձակման հետեւանքով:
- ¹⁷ Այս մասին հանգամանօրէն տես՝ Մաթեւոսեան, Սամուէլ Անեցու, էջ 39-45, 72:
- ¹⁸ «Ի ՈՉԲ. (1233) թուիս շնորհիւն Քրիստոսի, եւ Աբրահամ երեց, որդի Սարկաւագ քահանայի, թոռն Սամուէլ երիցոյ Անեցի ետու զիմ զանձագին Բ. (2) տուն նորաշէն եւ ի վերէն Բ. (2) կուրպակ ի սուրբ ուխտս ի Խծկանս... եւ փոխարէն հատուցէն մեզ յամենայն ամի Զ. (6) ար պատարագ՝ Դ. (4) Աբրահամու եւ Բ. (2) տէր պապ երիցու...» (Ն. Վ. Սարգիսեան, Տեղագրութիւնք Ի Փոքր Եւ Ի Մեծ Հայս, Վենետիկ, Մխիթարեան Հրատ., 1864, էջ 211):
- ¹⁹ Դիւան Հայ Վիմագրութեան, Պր. Ա., կազմեց Յ. Օրբէլի, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1986, էջ 56:
- ²⁰ Աբրահամեան, էջ 31. նաեւ՝ Բաբայեան, էջ 177, եւն.:
- ²¹ Ռ. Վարդանեան, «Պատճէն Տումարի Հայրոց»ի Խմբագրութիւնների Ժամանակի Որոշումը, Երեւան, Երեւանի Պետական Համալսարանի Հրատ., 2007, էջ 195-196:
- ²² Եւսեբի Պամփիլեայ Կեսարացու ժամանականք, Վենետիկ, Մխիթարեան Հրատ., 1818: Եւսեբիոսի Ժամանակագրութիւնի սկզբունքը հայ մատենագրութեան մէջ Սամուէլ Անեցուց առաջ չի կիրառուել, թէեւ այդ երկից օգտուել է դեռեւս Խորենացին, նաեւ՝ յետագայ շրջանի պատմիչները:

- ²³ Միջնադարում եւս երկն ընկալուել է երկմասնեայ, քանի որ գրիչներից ոմանք իրենց յիշատակարանը թողել են առաջին մասի աւարտից յետոյ եւ երկրորդ մասից առաջ, իսկ երբեմն ընդօրինակել են միայն առաջին կամ երկրորդ մասը:
- ²⁴ Այս մասին հանգամանօրէն տես՝ Կ. Մաթեւոսեան, «Սամուէլ Անեցու Ժամանակագրութեան Հնագոյն Ձեռագրերը», *Ակադեմիկոս Ն. Մառի Մշնդեան 140 Եւ Մահուան 70ամեակներին Նուիրուած Ժողովածու*, Երեւան, ՀՀ ԳԱԱ Հրատ., 2005, էջ 37-48. նաեւ՝ Մաթեւոսեան, *Սամուէլ Անեցու*, էջ 40-46, 72, 95:
- ²⁵ Աշխատութեան սկզբում իրենց աղբիւրները ներկայացնում են նաեւ Սամուէլ Անեցուց առաջ Անիում կաթողիկոսական պատուէրով պատմութիւն գրած Ստեփանոս Տարօնացի Ասողիկը եւ Սամուէլ Անեցուց յետոյ այստեղ իր երկը շարագրած Մխիթար Անեցին: Հայ պատմիչների մասին Սամուէլ Անեցին մասնաւորապէս գրում է. «Իսկ մերայինս ազգի ասել առաջին պատմագիր զԱգաթանգեղոս, որ գրեաց զպատմատ յուսատրելոյ զՀայս սրբոյն Գրիգորի՝ նորասքանչ համբերութեամբ. եւ այսա Մովսէս Խորենացի հաւաստապատում. եւ զկնի Եղիշէ, եւ Ղազարիկ, եւ Փաւստոս, որ է Բուզանդ պատմիչ՝ յառաջ քան զինքն: Եւ Հերակղն ի Սեբիոսէ եպիսկոպոսէ ասացեալ: Եւ Ղետնդ երիցու, եւ Շապիոյ, եւ տէր Յովաննէս, եւ ի վերջին ժամանակս Ստեփանոս վարդապետ՝ մականունն Ասղնիկ» (էջ 2-3):
- ²⁶ Կարէն Մաթեւոսեան, «Յովհաննէս Սարկաւազի Պատմական Թղթերն Ըստ Սամուէլ Անեցու», *Հայոց Պատմութեան Հարցեր, Գիտական Յօդուածների Ժողովածու, Թիւ 6, ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտ*, Երեւան, ՀՀ ԳԱԱ Հրատ., 2005, էջ 122-31:
- ²⁷ «Մինչեւ ցայստիկ ժամանեալ վայր՝ անկասկած հետեւութեամբ առաջնորդ ունելով զգիրս հաւաստապատումսն ծայրագոյն զառաջասացեալ վարդապետացն (*նկատի ունի Եւսեբիոս Կեսարացուն եւ Մովսէս Խորենացուն - Կ.Մ.*): Իսկ յայսմ հետե՛ ի տեղոց ուր պիտոյացաւ այլ ինչ յաւելով ի շարագրութիւնս մեր, աշխատութիւնք եւ տարակուսանք յաղագս անմիաբան գրելոյ պատմագրացն, ոմն առաւել եւ ոմն նուազ շարագրելով, կամ թէ ոչ բնաւ: Սակայն մեք՝ զբնախաւսիցն զո՞՞ր պահելով, սկսցուք ըստ կարի զհետ ճշգրտութեան հետեւելով...» (էջ 62. հմմտ.՝ ՄՄ ձեռ. թիւ 5619, 64ա):
- ²⁸ Արշակունեաց Թագաւորութեան անկումից յետոյ նշուում են հայոց մարզպանների, ապա հայոց իշխանների, աւելի ուշ՝ Բագրատունի թագաւորների տարիները:
- ²⁹ Հայոց մեծ թուականը հաստատուել է 552ին:
- ³⁰ «Իսկ մեք գկանունելոցս չափ հասուցուք մնացելովքս մինչեւ ի մերս ժամանակ. զմարդեղութիւն արարչին ըստ սահմանելոյս սկիզբն դնելով եւ զկայսերացն եւ զհայրապետականն եւ զթուականն, սկսանելով անտի, ուր զվախճանն էառ» (Անեցի, էջ 109):
- ³¹ Սամուէլ Անեցու Ժամանակագրութիւնի յատկապէս Դ-է. դարերի հատուածում բազմաթիւ են յայտնի պատմական դէպքերի ոչ-ճիշտ թուագրումները: Չգացուում է, որ հեղինակը ձեռքի տակ չի ունեցել մի հաւաստի ժամանակագրութիւն, որից կարողանար օգտուել: Օրինակ, հայոց կաթողիկոսների թուականները ներկայացուած են զգալի շեղումներով, որը վերանում է միայն Ը. դարի սկզբից:
- ³² Մխիթար Անեցի, *Մատեն Աշխարհավէպ Հանդիսարանաց*, աշխատասիրութեամբ Հ. Գ. Մարգարեանի, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1983, էջ 31:
- ³³ Լեւոն Խաչիկեան, Վ. Յակոբեան, «Ինչպէս Չպէտք է Հրատարակուեն Պատմական Սկզբնաղբիւրները», *ՀՍՍՌ ԳԱ Հասարակական Բաժանմունքի Տեղեկագիր*, 1949, թիւ 2, էջ 82:
- ³⁴ Ա. Աբրահամեան, *Յովհաննէս Իմաստասէրի Մատենագրութիւնը*, Երեւան, Երեւանի Պետական Համալսարան, 1956, էջ 300. նաեւ՝ Բ. Թումանեան, *Տոմարի Պատմութիւն*, Երեւան, Երեւանի Պետական Համալսարան, 1972, էջ 132:
- ³⁵ Մանր Ժամանակագրութիւններ, ԺԳ-ԺԸ. դդ., Հտր. Ա., կազմեց Վ. Յակոբեան, Երեւան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ., 1951, էջ 23:

- ³⁶ ՄՄ ձեռ. թիւ 5619, 73բ:
- ³⁷ Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, հրատարակութեան համար պատրաստեց Ա. Աբրահամեանը, Երեւան, Երեւանի Պետական Համալսարան, 1942, էջ 21, 31:
- ³⁸ Նոյն, էջ 11-31:
- ³⁹ Մանր ժամանակագրութիւններ, էջ 317-332:
- ⁴⁰ Նորայր Եպս. Պողարեան, «Ժամանակագրութիւն (XI-XVIII դդ.)», Բանբեր Մատենադարանի, Հտր. 9, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., 1969, էջ 257-282:
- ⁴¹ Լեւոն Տէր-Պետրոսեան, *Խաչակիրները Եւ Հայերը, Հտր. Ա.*, յաւելուած 2 («Սամուէլ Անեցու Մի Նորայայտ Շարունակողի Ժամանակագրական Ցանկը»), Երեւան, Նախագահ Տէր-Պետրոսեանի Արխիւի Եւ Գրադարանի Հրատ., 2005, էջ 483-484:
- ⁴² Մաթեւոսեան, *Սամուէլ Անեցու*, էջ 98-175:
- ⁴³ Այդ ձեռագրերի թուում են Վենետիկի եւ Վիեննայի Մխիթարեանների, ինչպէս նաեւ Երուսաղէմի ձեռագրերի մի մասը, որոնց պատճէները (մանրաժապաւէնները) Մատենադարանում չկան:
- ⁴⁴ *Samuelis Presbyteri Aniensis, Temporium Usque ad Suam Aetatem Ratio e Liberis Historicorum Summatim Collecta. Opus ex Haicanis Quinque Codicibus ab Iohanne Zohrabo Doctore Armenio Diligenter Exscriptum Atque Emendatum Iohannes Zohrabus et Angelus Maius Nunc Primum Coniunctis Curis Latinitate Donatum Notisque Illustratum Ediderunt, Mediolani, 1818, էջ 32-80:*
- ⁴⁵ 1865ին Վենետիկում լոյս տեսած իր գրքում Հայր Գ. Զարբհանալեանը, Սամուէլ Անեցուն անդրադառնալուց յետոյ, հայ ընթերցողին ծանուցում է. «Ասկէ գրեթէ յիսուն տարի առաջ՝ անուանի ծիրանատր Մայ, որ այն ատեն Սիլանու մատենադարանին տեսուչն էր, Եստրեայ Քրոնիկոնն հրատարակելու ատեն լատիներէն քարգմանեաց մատն Սամուէլի Երիցու ժամանակագրութիւնը եւ տպագրեց կրկին, մէյմը ի Սիլան (1818), երկրորդ անգամ ի Հռովմ (1839)» (Գ. Զարբհանալեան, *Պատմութիւն Հայերէն Դպրութեանց, Վենետիկ, Մխիթարեան Հրատ.*, 1865, էջ 550): Սամուէլ Անեցու *Ժամանակագրութիւնի* լատիներէն թարգմանութեամբ գրքերը կարելի է դասել մատենագրական եզակի հրատարակութիւնների շարքին, քանի որ որոշ ժամանակ անց *Ժամանակագրութիւնը* Ֆրանսերէն թարգմանութեամբ հրատարակած Բրոսէն նշում է, թէ լատիներէն հրատարակութիւնն ինքը չի տեսել եւ դրա մասին գիտի միայն Հայր Զարբհանալեանի յայտնածից (M. Brosset, *Collection d'Historiens Arméniens*, S.-Petersburg, 1876, էջ III): Լատիներէն հրատարակութեանն անծանօթ է եղել նաեւ *Ժամանակագրութիւնի* հայերէն բնագրի հրատարակիչ Տէր-Միքէլեանը:
- ⁴⁶ M. Brosset, *Collection d'Historiens*, էջ 339-483:
- ⁴⁷ Նոյն, էջ III-VI:
- ⁴⁸ Նոյն, էջ 467-483. հմմտ.՝ Անեցի, էջ 169:
- ⁴⁹ Զեռագրերից մէկը (ՄՄ ձեռ. թիւ 1719, էջմիածնի հին թուով՝ 1700), որը պահպանել է Ժամանակագրութիւնի գրեթէ անխաթար բնագիրը, հրատարակիչը համարել է պակասաւոր՝ այդ վերագրելով գրչի անուշադրութեանը, գրելով՝ «խիստ անուշադրութեամբ փայլում է գրչակը» (էջ ԺԵ.):

COMPILATION OF HISTOIOGRAPHERS' BOOKS:
THE *CHRONOLOGY* OF SAMUEL ANETSI
(Summary)

KAREN MATEVOSIAN

The *Chronology* of Samuel Anetsi is one of the most famous works of 12th century Armenian literature. It starts with the story of Adam and reaches the year 1163. Notwithstanding its broad time period, the book is written in a condensed manner.

Currently there are 70 partial or complete copies of the *Chronology*. It was translated into Latin in 1818, into French in 1876 and had a single Armenian scientific publication in 1893.

One of the basic and unique characteristics of the *Chronology* is that it is written in chronological tables, had many additions and completions, and was continued by other authors who extended it up to the 18th century.

Recent extensive research on the diverse copies of the *Chronology* has ascertained several aspects of Anetsi's biography. By discerning the oldest miniatures, researchers have established a clearer picture of the original *Chronology*. Besides, this has enabled them to separate the original work from later interferences and additions.

The article is a presentation of the latest research results, which shed further light on the biography, the content of the original *Chronology*, the characteristics of the original text, the nature of the additions, etc. These findings will enable the Matenadaran Institute to publish the comparative text of Samuel Anetsi's *Chronology*. For such a project the oldest four copies and the 1893 published version of the *Chronology* will be extensively used.

As for the additions to and interferences in the *Chronology*, which provide ample historical material, these will be compiled in a separate book that will include the various materials garnered from the diverse published and unpublished copies of the *Chronology* and the minor chronologies that have been written by authors who made additions to Anetsi's *Chronology*.